ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԽՆԴՐԱԳԻՐԸ

XVIII դարի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Հովսեփ Էմինից (1726-1809) պահպանվել են բազմաթիվ անգլերեն նամակներ, որոնք զետեղվել են 1792 թ. Լոնդոնում հրատարակված նրա ինքնակենսագրության մեջ: Նա գրել է նաև հայերեն նամակներ, որոնցից երկուսը (հասցեագրված հորը՝ Հովսեփին և վրաց Հերակլ II թագավորին) թարգմանել է անգլերեն և զետեղել այդ գրքի մեջ: Դրանց բնագրերը, դժբախտաբար, կորել են: 1958 թ. Հ. Խաչմանյանը Էմինի ինքնակենսագրությունը, որի մեջ նաև վերոհիշյալ նամակները, անգլերենից հայերեն է թարգմանել և հրատարակել Բեյրութում[1]:

Հ. Էմինին նվիրված իր արժեքավոր մենագրության մեջ Աբգար Հովհաննիսյանը տպագրել է 1783 թ. Էմինի գրած մի համառոտ նամակի լուսանկարը, որը նրան էր տրամադրել Աշոտ Աբրահամյանը[2]: *Վերջինս այդ նամակը բերել էր Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի արխիվից: Ա. Հովհաննիսյանը, որը մանրամասն գրել է Հ. Էմինի Նոր Ջուղայում դտնվելու և այնտեղից Հնդկաստան մեկնելու մասին, նամակի վերծանված բնագիրն իր դրքի մեջ չի զետեղել: Նա ենթադրել է, որ նույն արխիվում պետք է լինեն Հ. Էմինին վերաբերող նաև այլ փաստաթղթեր*[3]:

1791-1792 թթ. Էմինի գրած հայերեն նամակներ են պահվում Վիեննայի Մխիթարյան միաբանության արխիվում: Դրանք հասցեագրված են ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանին և Հովհաննես Լազարյանին: Էմինն այդ նամակներով արձագանքում է իշխան Գ. Ա. Պոտյոմկինի և զորավար Ա. Վ. Սուվորովի հրավերին՝ մեկնել Ռուսաստան և մասնակցել Հայաստանի ու Վրաստանի ազատագրման նպատակով ծրագրվող ռուսական արշավանքին: Նամակները հրապարակվել են «Պատմա-բանասիրական հանդեսում»[4]:

Հ. Էմինի՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի արխիվում պահվող նամակների մասին 1982 թ. դրել է վաստակաշատ բանասեր Լևոն Մինասյանը[5]: *Նա տվել է այդ, ինչպես նաև Նոր Ջուղայի հայերի Էմինին հասցեագրված նամակի բովանդակությունը: 1999 թ. հունիսին, երբ տողերիս հեղինակը գտնվում էր Նոր Ջուղայում, Լ. Մինասյանը սիրալիր մեր տրամադրության տակ դրեց այդ նամակների պատճենները՝ տպագրելու համար:*

Հայտնի է, որ Հ. Էմինը, Հայաստանից Հնդկաստան վերադառնալուց հետո, մեծ ցանկություն ուներ կրկին մեկնելու իր նախնիների հայրենիքը՝ նրա ազատագրման դործը կազմակերպելու համար: Իրաքի քաղաքների վրայով նա հասնում է Նոր Ջուղա, բայց Հայաստան մեկնել չի կարողանում: Նոր Ջուղայում 50-ամյա Էմինն ամուսնանում է: Ունե-

---

1 *Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները. Հովսեփ Էմինի անդլերեն ընագրեն թարգմանեց Հ. Խաչմանյան. Բեյրութ, 1958, էջ 117-122, 125-131:*

2 А. Р. И о а н н и с я н. Иосиф Эмин. Ереван, 1945. *Գրքի նոր հրատարակության մեջ (Երևան, 1985) այդ լուսանկարը տպագրված չէ:*

3 *Նույն տեղում, էջ 305-306:*

4 Վ. Ռ. Գ ր ի գ ո ր յ ա ն. *Հովսեփ Էմինի և Հովսեփ Արղությանի անտիպ նամակները (1791-1792 թթ.).-«Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 4, էջ 185-201:*

5 Լ. Գ. Մ ի ն ա ս յ ա ն. *Ս. Ամենափրկիչ վանքի արխիվը և Էմին Հովսեփ Էմինի երկու նամակները.- «Հայկազյան հայագիտական հանդես». Բեյրութ, 1982, էջ 283-285:*

նում է չորս զավակ՝ երկու տղա, երկու աղջիկ: Նա Նոր Ջուղայում էր, երբ 1779 թ. մեռնում է Իրանի տիրակալ Քերիմ խանը: Երկրում ստեղծված քաղաքական ծանր պայմաններից չափազանց տուժում են նաև Նոր Ջուղայի բնակիչները, բայց Էմինը կարողանում է պաշտպանել իր ընտանիքը: Նոր Ջուղայում մնալն այլևս անկարելի էր Էմինի համար, ուստի 1783 թ. աշնանը իր ավագ որդու՝ Արշակի հետ նա մեկնում է Շիրազ՝ այնտեղից Հնդկաստան անցնելու համար:

Հրատարակվող նամակներից երկուսը գրվել են Շիրազում: Առաջին նամակը հասցեագրված է Նոր Ջուղայի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոսին: Նա խնդրում է անհրաժեշտության դեպքում նյութական օգնություն ցույց տալ իր աներոջը՝ ուստա Գասպարին: Նամակը ստորագրված է «Էմինեանց Էմին Յովսէփի»: Անվան վրա հատուկ ուշադրություն են դարձրել թե՛ Ա. Հովհաննիսյանը և թե՛ Լ. Մինասյանը: Նրա անունը եղել է Էմին, հայրանունը՝ Հովսեփ, ազգանունը Էմինյանց, այսինքն՝ Էմին Հովսեփի Էմինյանց, բայց քանի որ հաճախ ստորագրել է նաև «Հովսեփ Էմին», այդպես էլ մնացել է պատմության մեջ:

Հաջորդ նամակը (ամսաթիվը չի նշված) հասցեագրված է Նոր Ջուղայում ապրող Պետրոս քահանային, որը եղել է գաղութի աչքի ընկնող հոգևորականներից մեկը՝ «խորհրդակից ծերակուտ ժողովարանի»: Էմինը հանձնարարում է նրան հուսալիորեն թաքցնել իր սուրը, որը մնացել էր տանը, իր որդի Արշակի անունով դարձնել տան կալվածագիրը՝ «զաբալեն», իր նամակը ոչ մեկին ցույց չտալ և պատռել: Բարերախտաբար, այդ խնդրանքը չի կատարվել, և հայրենասեր գործչի ձեռքով գրված նամակը հասել է մեզ: Նամակից պարզորոշ հայտնի է դառնում, որ Էմինը մտադրություն է ունեցել վերադառնալ Նոր Ջուղա, բայց դա նրան չի հաջողվել և հետագայում նա կնոջը կրտսեր որդու՝ Հովսեփի և երկու դուստրերի հետ կանչել է իր մոտ՝ Կալկաթա[6]:

Երրորդ նամակը Էմինը գրել է 1783 թ. դեկտեմբերի 20-ին և հասցեագրել իր աներ Գասպարին: Հաղորդում է, որ դտնվում է նավի վրա և մեկնելու է Մասկատ: Խնդրում է ողջույններ հաղորդել իր բարեկամներին:

Չորրորդ նամակը՝ գրված 1809 թ. մայիսի 3-ին, հասցեագրված է Հ. Էմինին, որն այն ժամանակ ապրում էր Կալկաթայում: Հեղինակները Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի երեք միաբաններն են և ջուղայեցի ազդեցիկ երկու հայեր: Նրանք հայտնում են, որ Ս. Ամենափրկիչ վանքը հայտնվել է ծանր վիճակում և խնդրում են նյութական օգնություն ցույց տալ նրան: Նոր Ջուղայում պահպանվել է այս նամակի պատճենը, որի տակ հեղինակները դրել են իրենց ստորագրությունները: Ձեռագիրը դժվարընթեռնելի է: Կան շատ անհասկանալի տեղեր: Հայտնի չէ այս նամակը հասե՞լ է Էմինին, թե ոչ: Կարծում ենք, նամակը հազիվ թե ընկներ Էմինի ձեռքը, որովհետև 1809 թ. օգոստոսի 2-ին նա մահացել էր Կալկաթայում, 83 տարեկան հասակում:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

6 А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 319.

-1-

Հովսեփ Էմինի նամակը Նոր Զուղայի առաջնորդ Մկրտիչ վարդապետին

Առ նորին վերայպատուեցեալ սրբազնութեան Մկրտիչ աստուածաբան վարդապետին[1] ողջոյն հնազանդաբար օղերձեմ և գօրհնութիւն հայցեմ:

Տէր իմ և հոգևոր հայր

Զսուրբ օրհնութեամբդ և մաքուր աղօթիւքդ՝ ելեալ ի քաղցրահամ ներկայութենէդ և ի տևման ութից աւուրց անվնաս հասաք աստ՝ յորմէ ի սակաւուց աւուրց ելանելոց եմք դէպի Աբուշէռ՝, զի որպիսի հեշտութեամբ արարաք զկէս ճանապարհս զօրութեամբ սուրբ աղօթիւքդ, յուսացեալ եմք ի տէր նոյնոյ օգնականութեամբն ժամանիցիմք ի անդ, և յայսմանէ ի Հնդիկս, ուր և ամենայն ուրէք ունիլ հանապաղ ի մտի զինամատար հայրագթութիւնդ, ակն ունելով ի էացուցիչ ընդհանուր էակաց, որ միշտ երջանկութեամբ նաև ուրախութեամբ վարիցես զհոգևոր և զմարմնաւոր կառաւարութիւնդ առ ի օգուտ փեռեկտեալ հոտիդ՝ ժողովել զնոսայ ի վարախ սրբոյն սիօվնի:

Եւ արդ ոչ է պատճառ և ոչ պատշաճ սակս աւելաբանութիւն առնել և աշխատ[...] սրբազնութեանդ՝ յադաղս խնամատարութեանդ ի վերայ դառանցդ և անջատեալս իմ ի յրնտանեաց իմոց. թէպէտ մարմնաւոր իմ են, բայց առաւել քումդ, որ է հոգևոր, և գերազանց քան զամենայն աշխարհականաց փանաքի[3] բարեկամութեանց: Իսկ կայ ևս ի ներ դանձարանի սրտիս անդստին և երեսունութամեայ անմոռաց բարեկամութիւնդ, որ յաւետ փայլեալ լուսաւորէ և մխիթարէ զհոգիս և զմիտս երախտիմաց նուաստիս:

Դարձեալ դարշապարդ համբուրմամբ աղերսեմ, զի ըստ որում ունէիր սէր և գոյթ առ հայրն իմ հանգուցեալն Յովսէփ, նոյն գունակ ունիցիս ընդ անէրին իմոյ և ծառայիդ ալեօք ծերացեալ ուստայ Դասպարին[1], մինչ զի եկից դարձեալ վճարել զփոխարէնն բարորութեանդ հանդերձ պտղօք շնորհակալութեամբ: Այլ եթէ խարջլուղի[5] կողմանէ խնդրիցէ, աղաչեմ, զի մի թողուցուս, պակասեցի:

Ողջ լեր ի փառս Յիսուսի և ի պարծանս ազգիս: Յաւել յայսմանէ կամ և մնամ վերոյ սրբազնութեանդ խոնարհ և հնազանդ պաշտօնաւոր ծառայից ծառայ Էմինեանց Էմին Յովսէփեան:

Եղաւ ի Շիրազ Թիրայ[6] 27 ամին 1783:

-2-

Հովսեփ էմինի նամակը Տեր Պետրոս քահանային

Սրբակրօն հայրդ իմ և արժանա[ւ]որ խորհրդակից ծերակուտ ժողովարանի տէր Պետրոս արհի քահանային

Ողջոյն սիրոյ և խնդութեան ի տէր

ծանիր անգինդ իմ ի դանձարանի գովարի սրտիս սենէկի աննման Մարգարիտ:

Յորժամ ելաք ի Ջուղայու գնացեալ, յամեցաք ի Տխտին Փոլատու[7], մոռացեալ զդինուարական սուրն իմ (եւրօրացւոյ) առաքեցի զ Գաբրիէլ անուն տղայն զի բերիցէ ի տանէ, անդիտուն զանքոչս յիմար գոլով ցուցեալ նմայ նախ իմ մեծ արևելեան սուրն, և ապայ եւրօբականն[8], որ եբեր առ իս մեծ իմն խոհեմութեամբ: Իսկ թողեալ անգ զարևելեանն, որ է ըստ կարգին, աղաչանքս այն, զի չէր պարտ տխմար զանքոչիս ցուցանելոյ...[9] յառաջագոյն աւել քան զհաղար անդամ ապսպրեալ և սաստիկ պատուիրեալ էի, զորս ոչ յումեք ցուցցէ, զի նշան հաւաստութեան դառնալոյ իմոյ ասացի և թողի ի տան: Այժմս ևս ժտեմ ի սիրոյդ և ի մեծապէս հայրագորով սիրոյդ սակս այնորիկ առանձին և ծածկաբար պատուէր տացես իմ անէր ուստայ Դասպարին, իզբյ կորուստ արասցէն և ոչ յումեք ցուցանիցէն և ոչ ասասցէն մարդւոյ: Թէպէտ մալիաթ[10] չունի կամ արժ, չուն[ի], որ ողորմրհոգւոյ աղայ և պարոն Պետրոսի պարդևեալն է՝ յիշատակարար պարտ է պահել զայն, յիմացեալ լինիցիք:

Խնգիր երկրորդ, ձեռացադիր սակաս պարտուց Պարսեղին մոռացեալ ոչ ետու անէրիս, ասացես ամարաթի[11] երեսի սէնէկի նողլգանումն[12] թողի, առեալ պահեսցէ, որ ոչ անկեալ ի ձեռս յումեք չնանոց եղիցի: Պահեսցէ մինչև ի գառնայն իմ, քանզի պարտական չեմ ես, այլ վասն քաղաքավարութեան և խաղաղութեան դրեցի, քեզ և անէրիս իսկ յայտնի է, նորա սիրտն էլ մեկ այնպէս օրհնեալ աստուծոյ սիրտ է, ուր առանց զայրանալոյ աներկրայ ընդունելոց է:

Եւս յոյս ի տէր մինչև այժմս տան Արշակի[13] անուամբ ղաբալէն[14] հաստատեալ իցէք: Հ ... նց[15] աշխատանաց ի վերայ իմ, որ ոչ դադարի և ոչ ունայն երթայ: Օնևօն լիցի քեզ, զի զթուղթս ոչ յումեք ցուցցես սրբազան առաջնորդին այնքան դատարկ գիր չեմ գրիր, մինչև ի լնուցու աստուծով զձեռս ծառային իւրոյ, ուստի քաջ գիտեմ զբնութենէ նորին մեծութեան, զի դատարկ թուղթն կիսարնթերցեալ եդեալ ի ներքոյ գոչակին փթեցուսցէ իրբև զպատառատուն յինս պառաւանց. աստուծով և աղօթիւք նորին ոչ ամանչեցից առաջի նորայ, այլ ար.նեամբ և պտղալի:

Բարեկամայ ողջոյն տացես, գիրդ պակաս չանիցես:

Ողջ լեր, քոյ ծառայ...

գիրս ...[16] ճղատես:

- 3 -

Հովսեփ Էմինի նամակը իր աներ Գասպարին

Իմ ազնիւ ...[17] հայր Գասպար

Յայտնի լինի որ կետումս աստուծոյ ողորմութեամբն ըստայի եմք լինում[18] ի Մաշկաթ[19], քանի քալամ[20] է խաթիրջամութեան համար[21] գրեցի նաւին վերայ, մնաք բարին զմեզ աղօթից չմոռանաք տան մեծին և փոքրին: Շատ կարօտիւ ողջոյն օղերձեմ և դուք ողջ լերուք ի ցնծութիւն իմ:

Սրբազան տէր Պետրոսին և այլոց բարեկամաց ողջոյն տասջիք Գառեդ փաշում քանի տողս վռազ դրեցի: Կրկին ողջ լերուք:

Ձերոց բարեկամ հնազանդ Էմինեանց Էմին Յովսէփեան:

Եղև Շեխմահլամդաւի նաւումն 1783 ամսեանն դեգամբրի 20[22]:

-4-

Նոր Ջուղայի քահանաների և քաղաքացիների նամակը Հովսեփ Էմինին

Յարդայպատիւ պարոն Էմին Յ. Էմինեան

Խնդամիտ արդար և ընդ նախնեացն մերոց աստուածուսոյց շաւիղս յօժարակամ համակամիլ, մանաւանդ թէ պարտաւոր հարկաղիր և մեր զվարս առաքելոցն զանձամբ արկեալ. այցելութեան ժողովրդոցն իմա հօտին Քրիստոսի կամայս որդոր թեկն[23] ածել ի վաղուց հետէ ցայսր: Մեծափափաղ տեսութեան օրհնեալ ժողովրդոցդ խանդակաթ ի վերն կաթոգին բուռն ...[24] ապա զմեզ առաքել ի մէնջ ձեզ այցելու զնուիրակ մեր զսրբազան Գէորգ վարդապետ Մկրտչեանն Երեանցի, զայրն առաքինի, երախտաւորն մեզ ...[25] մարդասիրութեամբն, մտերիմն ի բարեկամութեան և քաջածանոթ բազմաց առաքինութիւն նորա, թերևս և ձեզ ամենեցուն իսկ, զոր ընդունելով ձեր զնա, ի հոգևորսն ըստ ամենայնի մխիթարիք և ի վարս առաքինիս, զորոց և մեք ոչ երկուանամք անչուշտ, ուստի խոնարհական ազերսադրով մերով յանձն առնեմք զնա հովանաւորութեան ձերում պատուոյ և համբաւոյ նորին պաշտպան լինել, և մարդասիրութեանն հովանի առնել նմա, խրատս ու յիրս դժուարինս և ձեռնտու հանգիսանալ ի շահաբերն հորդել նմա ճանապարհս ի պանդխտութեանն մխիթար և սրտացուցիչ, զորս առաւել քան զայսոսիկ ի ձեր, տեսեալ բնաւոր ոչ ևն մեզ և զայնս շարշել ի ձեռն, այլ դլխովին զնորայն և զնա ի քաղցրասէր ի մարդասէր և ի բարեյօժար կամս և ի ...[26] ապաստան առնել և զայլ կարեորացն բուռն առնել:

Իսկ արդ, զամն ի ձեր խոհեմութիւն ապաստանիլ զսակաւուց ի ձէնջ շնորհելոց մեզ, որում առաւել կարօտիմք ամենախոնարհ ...[27] և այն լի տրտմութեամբ և վշտօք, քանզի ի ժանեաց դառն ժամանակիս մայրն

մեր ձեր հոգևոր Աթոռս Ամենափրկչի ծախեալ ի զանազան ձախորդութիւնս և ի նեղութիւնս այժմ մնայ այնպէս կարօտ օգնականութեան՝ ակնակառոյց մխիթարութեան և ձեռնտու ...[28] աղքատութեան իւրում, զձեզ զհարազատ որդիսդ ճանաչելով ակնկալեալ մնայ մարդասիրութեան ձերում, ուստի դյօժարամիտ նուիրս ձեր իրրու սիրասունդ որդիք առատաբաշխել աղաչեմք մօր ձերում, որով մարթասցի մերկանալ զտուայտական քուրձս կարօտութեան իւրոյ, յոր համակի բազձագին և ոչ ումեք, քան ի ձեզ, կարկառէ ձեռն իւր և լռիկ ոգբայ գթչուառ վիճակ իւր ի ձեզ, որոյ պաշտպանութեամբն և կարեկից ազգասիրութեամբ, յոլովք յեղբարց ձերոց ի բաղումս սփոփեցան և մխիթարեցան ոչ թէ յեղբարց ասեմ ի քրիստոնէից, այլև յօտար ազգաց, վայլեալ ի բազմադիմի ձեռնտութիւնս ձեր պարարեցան: Վասն որոյ վստահանալով յազգասիրութիւն ձեր կնքեմք և զթաղծողական աղերս մեր, և աղաչեմք զաստուած փոխարինել նուիրանայ ձերոց զհոգևոր և զմարմնաւոր երջանկութիւնս զօրանալ ձեր և զաւակաց ձերոց և ուռճանալ յօրհնութիւնս տեառն և զհոգիս համօրէն ննջեցելոցն ձերոց ի լոյս երեսաց աստուածութեան իւրոյ ընդ Սուրբս իւր հանգուցանել ի Քրիստոս Յիսուս: Ամէն:

Մնամք և մեք վասն կենաց ձերոց աղօթարարք և ազգասիրութեան ձերում ամենախոնարհ ծառայք

Աստուածատուր վարդապետ
Տէր Դաւիթ Մկրտումեան
Տէր Յոհաննէս Գալստեանց
Կարապետ Մկրտիչ Գուլղատեանց
Կարապետ Դ. Յակոբենց

Ի Ջուղայ ի վանս սրբոյ Ամենափրկչեան
1809 ի 3 մայիսի[29]:

Ծանոթագրություններ

1. Նոր Ջուղայի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոսի մասին բազմաթիվ հիշատակություններ կան Հարություն Տեր-Հովհաննիսյանցի «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան» գրքի առաջին և երկրորդ հատորներում (Նոր Ջուղա, 1880 և 1881 թթ.): Նա Ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդ է դարձել 1769 թ.: Քերիմ խանի հրավերով տարվա կեսը Մկրտիչն անց էր կացնում Շիրազում: Վախճանվել է 1787 թ.: Տապանագիրը տպված է Հ. Տեր-Հովհաննիսյանցի գրքում (հ. 1, էջ 67):
2. Աբուշեռը Բուշեռ քաղաքն է:
3. Փանաքի (պրսկ.) – չնչին, նվաստ, աղքատ:
4. Էմինի կինը, կրտսեր որդին՝ Հովսեփը, և երկու դուստրերը մնացել էին Նոր Ջուղայում աներոջ և զոքանչի մոտ: Բնականաբար, Էմինը անհանգիստ էր նրանց համար (տե՛ս «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները», էջ 474):
5. Խարջլուղ (պրսկ.) – ծախսի փող, ապրուստի դրամ:
6. Թիրա ամիսը համապատասխանում է հոկտեմբեր ամսին:
7. Տխտին Փոլատուն Սպահանի արվարձաններից մեկն էր:

8. Նոր Ջուղայում ապրած ժամանակ Էմինը լավ զինված է եղել: Նա ուներ երեք հրացան, երկու ատրճանակ, լայնաբերան մի սուր և լեզգիական դաշույն («Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները», էջ 474):

9. Բառն անընթեռնելի է:

10. Մալիաթ (պրսկ.) – արժեք, գին:

11. Ամարաթ (պրսկ.) – առանձնատուն, դղյակ:

12. Հավանաբար նշանակում է որմնախորշ:

13. Արշակը Էմինի ավագ որդին էր: Ծնվել էր Նոր Ջուղայում 1777 կամ 1778 թթ.: Էմինը մեծ հույսեր էր կապում նրա հետ և երազում էր նրան գարձնել ազատագրական շարժման գործիչ: Բայց Էմինի հույսերն ի դերև ելան, որովհետև Արշակը մահացավ 1790-ական թվականների սկզբներին:

14. Ղաբալա (արաբ.) – կալվածագիր:

15. Բառն անընթեռնելի է:

16. Նամակի այս մասը պատռված է, ընթերցվում է միայն «ճղատես» բառը:

17. Բառն անընթեռնելի է:

18. Ըռայի եմք լինում – ճանապարհվում ենք, ուղևորվում ենք:

19. Մաշկաթ – Մասկատ քաղաքն է:

20. Քալամ (պրսկ.) – բառ:

21. Խաթիրջամութեան համար (արաբ. հայ.) – միամտացնելու, հանգստացնելու համար:

22. Նամակի վերջում Էմինը գրել է «Շեխմահլամդաւի նաւումն»: Նամակի մեջ էլ նշել է՝ «գրեցի նաւին վերայ»: Հրատարակելով այս նամակի լուսանկարը՝ Աբգար Հովհաննիսյանը նշում է, որ այն գրվել է 1783 թ. դեկտեմբերի 20-ին Մասկատից: Ինքնակենսագրությունից երևում է, որ Էմինը Մասկատ է հասել Շիրազից դուրս գալուց 92 օր անց, իսկ վերը նշված նամակը նա գրել է դեկտեմբերի 20-ին, Շիրազից հեռանալուց երկու ամիս անց: Հետևաբար, նա Մասկատ դեռ չէր հասել, գտնվում էր ճանապարհին: Բայց ամենակարևորը նամակն է, որի վերջում պարզ ու հստակ ասված է՝ «աստուծոյ ողորմութեամբն ըռայի եմք լինում ի Մաշկաթ»: Այսինքն՝ մեկնում ենք Մասկատ, ուր նրանք հասել են մեկ ամիս անց:

23. Նախադասությունն անհասկանալի է:

24–28. Բառերն անընթեռնելի են:

29. Նամակի վերջում դրված տարեթվի մեջ 1809-ի զրոն շատ նման է 4-ի, բայց դա չի կարող 1849 թվականը լինել, որովհետև Էմինը մահացել էր դրանից 40 տարի առաջ՝ 1809 թ. օգոստոսի 2-ին (տապանագիրը տե՛ս А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 369):